600.0186.22.06.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2016 թվականի №186Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի №704Ա ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի №116Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանի 2016 թվականի մայիսի 30-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

   1) 2010 թվականի դեկտեմբերի 8-ի «Անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №704Ա որոշման հավելվածի՝ №0883 թույլտվության պայմանների 4-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «8) ազդանշը՝ Արաբկիր.».

   2) 2016 թվականի մայիսի 11-ի «Անհատ ձեռնարկատեր Սուրեն Երեմյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №116Ա որոշման հավելվածի՝ №1157 թույլտվության պայմանների 4-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «8) ազդանշը՝ Արաբկիր-1.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
22 հունիսի 2016թ.
ժամը 16 00